


2722



754
U-456

ՍՏԵՓԱՆ ԱՂԱԶԱՆՅԱՆ

27.03.2014

21 OCT 2010

«ԱՐՎԵՍՏ»-Ի ԳՐԱԴԱՐԱՆ № 1.

759-
Ա-456

Ն Կ Ա Ր Ի Չ

ՍՏԵՓԱՆ ԱՂԱԶԱՆՅԱՆ

ԿՅԱՆՔՆ ՈՒ ԱՐՎԵՍՏԸ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՅԵՐԵՎԱՆ

1927

ՏՊԱՐԱՆ ՇԵՐՄԵՍ
ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅԱՆ,
ՄԱՐԲՍԻ ՓՈՂ. № 29
ԳՐԱՌԵՊ. 136Բ
ՏԻՐԱԺ 500.



32902. 6

ՆԿԱՐԻՉ ՍՏԵՓԱՆ ԱՂԱՋԱՆՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՈՄԵՆՏՆԵՐԸ

Ծնվել է նա 1864 թվին Շուշի քաղաքում, մի
դերձակի ընտանիքում*: Սկզբնական կրթությունն ըս-
տանում է Շուշիյի Թեմական-Քաղաքային դպրոցնե-
րում, վերոնկալի աշխարհի յի ընկնում առանձնապես վայել-
չագրության մեջ: «Փող վոր ընկնում եր ձեռքս, ասում
եր մեզ Աղաջանյանը, մատիտ է թուղթ եյի առնում և
արջեր, ձիեր ու զանազան նկարներ նկարում:»

18 տարեկան հասակում վերջացնում է նա դպրոցը
և անցնում Բագու, ուր աշխատում է քեռու նավթահո-
րերի վրա: Յերկու տարուց հետո գնում է Բուխարա
և քեռու գործերով է զբաղվում:

1884 թվին մեկնում է Մարսել և մտնում է նախ
ճառնավոր մի դպրոց, Փրանսերեն լեզուն սովորելու
նպատակով: Ապա հաճախում է մեխանիքական ինժե-
տիտուսը: Մի հանգամանք սակայն վերջնականապես
վճռում է նրա կյանքի ուղին: Նկարիչ Ամին, վոր մասնա-
վոր դպրոցում նկարչության դասեր եր տալիս, տեսնելով
Աղաջանյանի նկարչական ձիրքը, խորհուրդ է տալիս
նրան անպատճառ մտնել նկարչական դպրոցը: Աղա-
ջանյանն առանց տատանվելու մտնում է Մարսելի նը-
կարչական ստուդիան և չորս տարի ուստնում: Դպրո-
ցում նա հաջողություն է ունենում և ամեն տարի ըս-
տանում առաջին մրցանակը: Նույն շրջանում էլ նա

* Կենսագրական տվյալները հաղորդել է նկարիչը: Ա. Յե.

մասնավոր դասեր ե առնում պրոֆ, Մեսարի մոտ, վր-
իւր պորտրետներով մեծ ազդեցութիւն ե գործում Ազա-
ջանյանի նոր կազմակերպովոյ տաղանդի վրա: Այնու-
հետեւ 3 տարի ապրում ե նա Մարտիկում ե ստանում
ե բազմակողմանի տպավորութիւններ: Ժամանակա-
շրջանի նկարչական հոսանքները-իմպրեսիոնիզմը, ու-
ալիզմը ե նատուրալիզմը զգալի կերպով ազդում են
նրա հոգեկան ապրումներին վրա:



ԻՆՔԵՆԱՆԿԱՐ Իրիկ և մանուսի «Սե-
կադեմիա Ժուլիան», ուր Գիկարվիտաական լուրջ կրթ-
թույթուն և ստանում: Իր ուսուցիչները՝ պրոֆ. Ժան-
Պոլ-Լորանսն իր կոմպոզիցիայով և Ֆենիամիհն Կոնս-
տանն իր սորաբեաներով դնում են նրա վրա իրենց
ազդեցութեան խոր կնիքը: Այդ ժամանակաշրջանում
էլ նա հաճախ այցելում և Լուվրը, Լյուկսեմպուրի,

Մարտիկումն հա-
խը տնտեսական գո-
յությունը պահպա-
նելու համար իր ճա-
շակին հակառակ նը-
կարները և նկարում
և ծախում: Այդ դը-
րությունը շատ
վատ և ազդում նրա
հոգեկան աշխարհի
վրա և նա զգլած,
1897 թվին, ուղղակի
փախչում և Մար-
տիկից գեպի Փա-
րիզ և մտնում «Ա-

ճանութանում և հին վարպետների գեղարվեստական արժեքների հետ, ուսումնասիրում և նրանց ուղղությունները, նրանց մոտեցումը և տեխնիկան: Արվեստի կրակով գնում և նաև Բրետան հայուղներ նկարիչու համար:

1900 թվին ավարտելով Փարիզի նկարչական ա-
կադեմիան, վերադառնում է իր ծննդավայրը՝ Շուշի,
ուր նկարում է մի շարք աշխատանքներ: Այս անցնում
է Բագու և պատվեր-
ներ և վերցնում Փա-
րիզ մեկնելու և իր
տրվիստը խորացնելու
նպատակով:

1903 թվին անց-
նում է Ռոստով և մըտ-
նում Նոր-Նախիջևանի
որիորդաց Քաղաքա-
յին դպրոցը, նկար-
չության ուսուցչի պաշ-
տոնով: Նույն շրջա-
նում պաշտոնավարում
է Ռոստովի Առևտրա-
կան ուսումնարանում
ռանձին նկարում:



Այդ ժամանակաշրջանում մի խումբ նկարիչներ Նոբ-Նախիջևանում կազմակերպում են մի շարք ցուցահանդեսներ, ուր Աղաջանյանն իր նկարներով աչքի յերկնում և գրավում հասարակության ուշադրությունը:

1914 թվին հրավիրվում է ուսաց պետական գե-
ղարվեստական դպրոցը, նկարչություն ուսուցչի պաշ-

տոնով, ուր մնում է մինչև 1921 թիվը: 1922 թվին մտնում է Յերևանի գեղարվեստական տեխնիկումը, ուր պաշտոնավարում է մինչև որս:

Ա. Պարբերակներ

- | | |
|---------------------------------|---|
| Սահման Աղաջան-
յանի նկարները | 1. Նկարչի հոր պատկերը |
| | 2. » մոր » |
| | 3. » կնոջ » |
| | 4. » զոքանչը |
| | 5. Մտախոհ առա կինը |
| | 6. Բրիտանացի աղջիկը |
| | 7. Ծեր բրիտանուհին |
| | 8. Ղարաբաղցի թուրք աղջիկը |
| | 9. Հայունու գլխանկար |
| | 10. Նոր-Նախիջևանցի հայունիք |
| | 11. Ինքնանկար (2 տեսակ) |
| | 12. Վասիլը |
| | 13. Կոնդի բիձա Սեղրակը |
| | 14. Մանկական գլխանկար
(Յերևանցի), 4 տեսակ. |
| | 15. Ղարաբաղցի պառավ կինը |
| | 16. Զկնորսը |
| | 17. Լուկաշինի կինը |
| | 18. Բժիշկ Հովհաննիսյանի
պորտրետը |
| | 19. Հակոբ Խաչատրյանի
պորտրետը |
| | 20. Թամար Եփրեկյան |

Բ. Պեյզաժներ

21. Շուշու հին թաղամասը
22. Լքված տնակ Շուշում
23. Իմ պատշգամբից
(Ռուստովում)
24. Ղարաբաղ
25. Յերևանի մեջիղը
26. Բիշտառու լեռը
27. Ելպրուս »
28. Աղյուսի գործարան Շուշում
29. Ժայռերի ետյուղ
30. Ետյուղ Փարիզի շրջակայքից
31. Կրոկյի, Բուլոնի անտառը
32. Շուշու լեռները
33. Գարուն
34. Արարատը
35. Մեր տան այգին

Հիշյալ նկարների մի մասը գտնվում են Յերևանի Պետական թանգարանում, ինչպես նաև Ռուստով, Բազու, Նոր-Նախիջևան, Թիֆլիս, և զանազան մարդկանց մոտ:

Աղաջանյանն այժմ վրձինում է կատարելագործված պորտրետներ:

Այդ նկարների յետևում ցուանում է կաղմակերպված հին վարպետ և առողջ ուսուցիչ նկարիչը:

ԱՐԱՄ ՅԵՐԵՄՅԱՆ

12 Դեկտեմբեր 1926

Յերևան

Художник Степан Агаджанян

АРАМ ЕРЕМЯН

Родился в 1864 году в городе Шуше, в семье портного. Первоначальное свое образование получил в Шушинской Армянской духовной семинарии, где он выделялся своей способностью в чистописании. „Когда попадались мне в руки деньги, рассказывал он про себя, покупал я на них карандаши и бумагу, на коих рисовал различные картинки“.

Окончил он школу 18-летнем возрасте, после чего переехал в Баку, где он работал в нефтяных промыслах своего дяди. Через 2 года оставляет эту работу, и по поручению дяди отправляется Бухару, по его коммерческим делам.

В 1884 году едет в Марсель, там поступает в частную школу, для изучения французского языка. После начинает посещать механический инженерный институт. Одно событие предreshает окончательно его судьбу: Художник-Ами, учитель рисования, частной школы где он учился, фр. яз. замечая художественные способности Агаджаняна, советует ему поступить непременно в художественную школу. Агаджанян без всяких колебаний поступает в Мар-

сельскую художественную студию и учится там четыре года. В школе он имеет большой успех, получая ежегодно художественную премию. В этом же периоде он берет частные уроки у профес. Местри. Последний своими портретами оставляет глубокий свой отпечаток на талант Агаджаняна.

13 лет Агаджанян проживает в городе Марсели, получая всесторонние впечатления. Современные художественные течения, как напр.: Импрессионизм, реализм и натурализм чувствительно влияют на его духовные переживания.

В Марсели, чтобы поддержать свое материальное существование, он рисует и продает картины, против своего художественного вкуса. Это положение дурно отражалось на его душевное состояние и он в 1897 году уезжает из Марсели в Париж, поступает там в Академию „Жульян“, где получает серьезное художественное образование. Учителя его: проф. Жан-Поль-Лоранс и Бенжамин Констан, первый своей композицией, второй своими худ. портретами оставляют на него глубокий, неизгладимый отпечаток. В этом же периоде он часто посещает Лувр и Люксембург, ознакомливаясь там с художественными произведениями старых мастеров и изучая их направление, подход и техника в летние месяцы Агаджанян Путешествует также в Бретань для писания этюдов.

В 1900 году, кончая Парижскую художест-

Художник Степан Агаджанян

АРАМ ЕРЕМЯН

Родился в 1864 году в городе Шуше, в семье портного. Первоначальное свое образование получил в Шушинской Армянской духовной семинарии, где он выделялся своей способностью в чистописании. „Когда попадались мне в руки деньги, рассказывал он про себя, покупал я на них карандаши и бумагу, на коих рисовал различные картинки“.

Окончил он школу 18-летнем возрасте, после чего переехал в Баку, где он работал в нефтяных промыслах своего дяди. Через 2 года оставляет эту работу, и по поручению дяди отправляется Бухару, по его коммерческим делам.

В 1884 году едет в Марсель, там поступает в частную школу, для изучения французского языка. После начинает посещать механический инженерный институт. Одно событие предreshает окончательно его судьбу: Художник-Ами, учитель рисования, частной школы где он учился, фр. яз. замечая художественные способности Агаджаняна, советует ему поступить непременно в художественную школу. Агаджанян без всяких колебаний поступает в Мар-

сельскую художественную студию и учится там четыре года. В школе он имеет большой успех, получая ежегодно художественную премию. В этом же периоде он берет частные уроки у профес. Местри. Последний своими портретами оставляет глубокий свой отпечаток на талант Агаджаняна.

13 лет Агаджанян проживает в городе Марсели, получая всесторонние впечатления. Современные художественные течения, как напр.: Импрессионизм, реализм и натурализм чувствительно влияют на его духовные переживания.

В Марсели, чтобы поддержать свое материальное существование, он рисует и продает картины, против своего художественного вкуса. Это положение дурно отражалось на его душевное состояние и он в 1897 году уезжает из Марсели в Париж, поступает там в Академию „Жульян“, где получает серьезное художественное образование. Учителя его: проф. Жан-Поль-Лоранс и Бенжамин Констан, первый своей композицией, второй своими худ. портретами оставляют на него глубокий, неизгладимый отпечаток. В этом же периоде он часто посещает Лувр и Люксембург, ознакомливаясь там с художественными произведениями старых мастеров и изучая их направление, подход и техника в летние месяцы Агаджанян Путешествует также в Бретань для писание этюдов.

В 1900 году, кончая Парижскую художест-

венную Академию, возвращается на свою родину в Шушу, исполняет ряд этюдов. Перезжая в Баку готовит материал для будущих своих работ.

В 1903 году переезжает в Ростов, где служит в качестве преподавателя по рисованию в Ново-Нахичеванской женской городской школе. Одновременно служит в Ростове в Комерческой школе и занимается собственными рисункамк.

В этом периоде группою художников была организована рядь выставок в Нов.-Нахичевани. Здесь Агаджанян отличается своими портретами и привлекает общественное внимание.

В 1914 году Агаджаняна приглашают в Русскую государственную художественную школу учителем рисования. Здесь он остается на должности до 1921. г. В 1922 году поступает Агаджанян в Эриванский художественный техникум, где служит по настоящее время.

Часть картин Агаджаняна находятся в Эриванском Государ. Музее, также в Баку, Ново-Нахичевани и в Тифлисе у разных лиц. последние работы Агаджаняна наиболее законченные в них отражается вполне установившийся старый мастер художник и здоровый реалист.

С армянского перевел
ВАГАН МИРАКЯН

PENTRISTO STEPHAN AGHAG'ANJAN

ARAM YEREMIAN

Li naskig'is en la aro 1864 en S'us'io (urbo), en tajlora familio. Unuan instruadon li ricevas en S'us'iaj Tema (regiona) kaj Urba lernejoj, kie li evidentigasspeciala sian decan vivmanieron.

„Kiam mi havis monon—diras al ni Ag-hag'anjan, mi ac'etis kraĵonojn kaj paperon kaj pentris ursojn kaj diversajn pentraĵojn“.

En dekoka jarag'o li finas la lernadon kaj veturas en Bakù kaj Buhara, kie li laboras por aferoj de sia onklo.

En la jaro 1884 li estas jam en Marselo, kaj eniras iun Armenino el Nor Nah'c'evan, privatan lernejon por



eklerni la francan lingvon. Poste li vizitas Mekani-
kan Instituton. Unu cirkonstanco, tamen, findecidas
lian vivovoĵon. La pentristo Amin, la instruisto de
pentrado en tiu lernejo, rekoninte la pentrokapab-
lojn de Aghag'anjan, konsilas al li nepre viziti pentro
—lernejon. Aghag'anjan senhezite eniras la Pentro-
studion de Marselo kaj dum kvar jaroj lernas tie.
Samtempe li akceptas privatajn lecionojn de Profe-
soro Mestrie, kiu grave influas al la noveorgan-
izig'anta talento de Aghag'anjan, pro siaj portretoj.

13 jarojn pasigas li en Marselo, ric'ig'ante per
diversflankaj impresoj. La modernaj fluoj en la
pentrarto, la impresionismo, realismo kaj naturalis-
mo sufiĉe influas al lia psikiko.

En 1897 li estas en Parizo kaj eniras en
„Akademia Jouliä“ kie li ricevas seriozan belartan
edukadon. Liaj instruantoj, la profesoro leon Poul
Lorans, per sia kompozici-arto, kaj Benjamin Kons-
tan, per siaj portretoj, restigas al li la profundan
stampon de sia influo.

Fininte la Akademion en Parizo, en 1900 jaro
li revenas al sia naskig'urbo—S'us'i. Poste li veturas
al Baku'o, esploras tipojn de laboruloj kaj preparas
materialojn por estonta verkado.

En 1903 jaro li translokig'as al Rostovo kaj
tie li farig'as instruanto de la pentrado en la Urba
Fraŭlina lernejo de Nah'c'evano (sur Dono). Sam-
tempe li oficas en la lernejo de Darkov en Rostovo.

En 1914 jaro oni invitas lin kiel instruiston
de pentrado en la Regnan Artlernejon de Rusio.

En 1924 jaro li akceptas la saman oficon en
Pentrarta studio en Erivano, kie li restas g'is nun.

Esperantigis: Gurgeno Sevak

Erivan

ՆԿԱՐԻՉ ՍՏԵՓԱՆ ԱՂԱՋԱՆՅԱՆԻ ԱՐՎԵՍՏԸ

Արդի հայ հասարակութեանը համարյա անձանոթ
են իր միջավայրում անաղմուկ աշխատող կերպարվես-
տագետները: Այդպիսիների թվումն է նկարիչ Ստեփան
Աղաջանյանը, վոր Խորհրդային Հայաստանի ար-
վեստագետների մեջ առաջնակարգ տեղ է զբաղում իր-
րե պորտրետիստ. նա 30 տարիներից իվեր ընթանում
է այդ ուղիով, նկարելով միաժամանակ պեյզաժ:

Աղաջանյանը վաղուց ձեռնկերպված նկարիչ է և
վարպետ, վորոշ ունակութեամբ ու տրադիցիաներով,
վստահ է ճշգրիտ վրձնելով ժառանգելով հին արվեստի
առողջ ուսուցողական ըմբռնումը, նա առանց սայթա-
քումների առաջ է գնում, նորանոր նվաճումներ անելով
արվեստի խնդիրներում: Մինչև իրեն գտնելը Աղաջան-
յանն անցել է զրկանքների. գոյութեան կովի յերկա-
րտե ժամանակաշրջան: Նրա ստեղծագործութեանը
խճվիկ է կարիքի վստաջում, վորը թեև վերջնա-
կանապես չի կաշկանդել Աղաջանյանի արվեստը, բայց
փոքր խոչընդոտ չի հանդիսացել նրա տաղանդի լիա-
կատար բարգավաճման ճանապարհին: Դեռ պատանե-
կան հասակում նա ստիպված է լինում ծառայել իր
մորեղբոր մոտ: Բայց պատանի Աղաջանյանին չի բա-
վարարում առևտրական ասպարեզը. նա զգում է, վոր
իր կոչումը դրանում չէ և յերբ քեռու հանձնարարու-

Թյամբ մեկնում է Բուխարա և այնտեղից բերած գորգերը Թիֆլիզ է տանում ծախելու, նա այլևս չի վերադառնում: Թիֆլիզում Աղաջանյանի վրա ուժեղ ապավորություն են թողնում Բաշինջաղյանի 2 նկարները: Այդ խոր ազդեցություն ներքո, ապագա նկարչի սրտում ինչ վոր անորոշ ձևակերպումներ են կատարվում, ինչ վոր անհայտ, բայց ազդու ուժ քաշում է հեռուն... և նա 1884 թ. մեկնում է Փրանսիա:

Աղաջանյանը իջնում է Մարսելում իր քեռու Ա. Քոչարյանի մոտ և մի շաբաթ հետո դպրոց է հաճախում Փրանսերեն սովորելու, վոր համաձայն Քոչարյանի ցանկություն մի վորևե արդյունավետ մասնագիտություն սովորի: Այդ դպրոցում Աղաջանյանն այնպիսի ընդունակություն է ցուցադրում նկարչության մեջ, վոր նկարչության ուսուցիչ՝ Ամին մի նամակով հորդորում է Քոչարյանին, վոր նրան անպայման նկարչական դպրոց ուղարկի: Քեռին ավելի գերծնական գտնելով Աղաջանյանի ինժեներ դառնալը, տալիս է նրան տեխ. դպրոցը, վոր այնտեղից մասնագիտական բարձրագույն դպրոց անցնի: Ամին համոզում է Քոչարյանին, վոր Աղաջանյանի կոչումը արվեստն է և նա թույլատրում է նրան տեխնիկական դպրոցի հետ միաժամանակ Մարսելի նկարչական ստուդիան հաճախել: Ստուդիայի դասատու՝ Միստրի խորհրդով Աղաջանյանը թողնում է տեխնիկական դպրոցը ու ամբողջովին կապվում գեղարվեստական դպրոցի հետ: Այդտեղ ամենակարճ ժամանակամիջոցում նա հասնում է մինչև նատուրնի դասարանը: Հիշյալ դասարանում մեկ տարի ֆուլուջ հետո նյութական անապահով դրությունը ստիպում է Աղաջանյանին դպրոցը թողնել և տարիներով զբաղվել

բազմազան գեղարվեստական խալտուրայով, վորի արդյունքներով հաճախ վաճառողներն են ոգտվում:

Աղաջանյանը բեկով Սալոն քաղաքի հարստություններին մատին մեկնում է այնտեղ ու զբաղվում է գլխավորապես պորտրետներ նկարելով, իսկ վերջը և նկարչական դասեր տալիս:

Այսպիսով Աղաջանյանի նյութական դրությունը բարելավվում է, միևնույն ժամանակ Քոչարյանը գրում է Կովկասից, վոր նորից կարող է ոժանդակել, թող Փարիզ մեկնի: Մոտավորապես 33 տարեկան հասակում Աղաջանյանը մեկնում է Փարիզ և մտնում Ժուլիանի Ակադեմիան: Այդտեղ ժան-պոլ-լորանսի և Բենիամին Կոնստանի մոտ սովորելով՝ 3 տարվա ընթացքում ավարտում է ակադեմիան անաջին մրցանակով:

Աղաջանյանի մեծ ուսուցիչ՝ հռչակավոր պատմական նկարիչ Ժան-պոլ-լորանսը, վորը հայտնի չե իբրև մոռյլ ինկվիզիցիայի և առհասարակ վողրերգական սարսափների անողոր ճշտությունը պատկերագրող, իր խոհուն, բայց բնական կոմպոզիցիաներով ուժեղ, հյուսթալի գույներով, վրձինելու համարձակ մաներայով և իր նկարելու վստահ ճշգրիտ մոտեցումով, զգալի ազդեցություն է թողել Աղաջանյանի արվեստի վրա: Նրա յերկրորդ ուսուցիչը վոչ պակաս մեծություն ներկայացնող Ժան Ժոդեֆ Բենիամին Կոնստանը, վորը իբրև որիննաալիստ հայտնի չե իր արարական և արեվելյան կենցաղի պատկերներով, բայց առավելորեն հռչակված է պորտրետներով, նույնպես իր ինտենսիվ վնովուտն կոլորիտով և մանավանդ սեալ նրբաճաշակ պորտրետների տրակտովկայով անհերքելի հետք է թողել Աղաջանյանի պորտրետական արվեստի վրա:

Հիշյալ գեղարվեստական բարձրագույն դպրոցը ավարտելուց հետո, Աղաջանյանը պատրաստվում է արվեստագետներին շրջանը մտնել և ցուցահանդեսներին մասնակցել, բայց հանկարծ նամակ է ստանում տնից, վոր վերադառնա: Ժան-պոլ-լորանսը, մեծ հույսեր ունենալով. Աղաջանյանի ընդունակութունների վրա, խորհուրդ չի տալիս գնալ: Աղաջանյանը խոստանալով շուտով վերադառնալ ներկերով և նկարներով, հասնում է Շուշի: Հույսերով սպասող ընտանիքը ցնծությամբ ընդունում է նրան: Հայրը ծածուկ կռնչում է խորթ մորեղբորը Սիմոնին, իբրև Գերմանիայում յեղած «բանխիմաց» մարդու և ցույց է տալիս յերիտասարդ նկարչի գործերը: Նկարների, գույների քավածներից, խորթ ու բորթ մականերով ինչ նայելով նա հայտնում է, վոր «նոր սկսողի» աշխատանքներ են: Այդքան տարիներ Փարիզում միալուց հետո քաղքենիական շահագետ միջավայրը կարծում է, վոր Աղաջանյանը մեծ փողերով է վերադառնալու, բայց տեսնելով հակառակը վարաման մեջն է ընկնում ու աստիճանաբար հրաժարվելով արհամարհական վերաբերմունք և ցույց տալիս նկարչին:

Բամբասանքներից ձանձրացած Աղաջանյանը հեռանալով հոր տնից, քաղաքի ծայրին սենյակ է վարձում, վորտեղից ի դեպս հարմար է լինում ամեն որեւոր դեպքերի գնալու: Որեց որ զգալով մթնոլորտի ճնշիչ, ապականիչ ազդեցութունը, Աղաջանյանը աշխատում է որ առաջ վերադառնալ Փարիզ, վորի համար դիմում է հարուստներին, բայց ապարդյուն: Վերջապես այդ բոլոր նախատիքներից նա փախչում է Բագու, հուսալով, վոր պատվերներ ձարելով հնարավորու-

թյուն կատանա Փարիզ գնալու: Վոչ մի պատվեր չհա-րելով՝ Ա. Քոչարյանի խորհրդով մտադրվում է մի քանի գլխանկարներ և պեյզաժներ ցուցադրել վիտրինա-յում, բայց շրջանակների փող չի ունենում: Քոչարյա-նը իր վրա վերցնելով այդ հոգսը, կանչում է շրջանա-կագործ և կենդանագիր Մուսահեյանին ու ոգտվելով դեպքից հարցնում նրա կարծիքը: Այս յերկրորդ «եկոպերտիզան» ել բացասում է Աղաջանյանի արվեստը: Մուսահեյանը ծիծաղելով հայտնում է, վոր դեռ «խամ ե» և իր մոտ է հրավիրում, վոր «մի քիչ բան սովորի ու իր գլուխը պահի»: Փարիզի գեղարվեստական ակա-դեմիան առաջին մրցանակով վերջացրած տաղանդավոր նկարչի ապացույցներին ցուցանակագիրը բարեսիրտ պարզամտությամբ պատասխանում է, վոր «դեռ ջահել ես»: Քոչարյանի խնդրանքը, Աղաջանյանը կարճ ժա-մանակով հաճախում է Մուսահեյանի արհեստանոցը և ցուցանակներ նկարում: Այստեղից սկսած՝ վորոշ չափով ընկճված՝ նկարչիչը զիջում է կարիքին, անցնում է գեղ-խալտուրային: Նեֆտոսլոմիշկենիկ Աշուրբեգովը պատվիրում է 4 պորտրետներ, այն պայմանով, վոր իշեն նոր տան պարագնի մուտքն ել զարդանկարի: Այդ միջավայրում գեղարվեստական պատվերն անգամ նկարիչը խալտուրայի «դավեսկայով» է ստանում: Դը-րանից վերջը Նեֆտոսլոմիշկենիկի հրավիրում Աղաջանյանին իր ամբողջ տունը զարդանկարելու, 15 հազար ռուբլի վարձատրությամբ:

Աղաջանյանը դեռ գործի չանցած, բռնկվում են Հայ-Թուրքական առաջին ընդհանուրմները, վորոնք ըս-տիպում են նրան 1903 թ. ուղվել Մոսկվա, Փարիզ անցնելու մտադրությամբ: Մոսկվայի ճանապարհին,



նա հանդիպում է Ռոստով, ուր այնպես էլ կանգնեց և առնում է մնում մինչև Յերեան դալը: Բազմում կատարված գեղարվեստական աշխատանքները լինում են մի քանի պորտրետներ և նույնքան էլ ծովային և ալպիններ: Մոլորեցուցիչ միջավայրը, վորից փախչելով փորձում է ազատվել Աղաջանյանը, կարծես հետապնդում է նրան, ավելի շուտ նրա դրած վորոշ կնիքը նկարիչը ման է ածում իր մեջ և այնպես էլ, հակառակ իր ցանկություն, մեծ մասամբ կատարում է պատկերներ, անվերջ հուսալով, վոր դա փրկարար միջոց կը դառնա նպատակին հասնելու համար, բայց միջոցն անհատելիորեն նպատակ է դառնում:

Ռոստովում Աղաջանյանը 2 դպրոցներում նկարչություն դասատուի պաշտոնով ապրում է համեստ, այն աստիճանի հասարակ հաղնված, վոր վոչ միայն քաղաքը, այլ իր աշակերտները յերկար ժամանակ չեն իմանում նկարիչ լինելը: Չնայած նրան, վոր 2 դպրոցներում ծանրաբեռնված է լինում դասերով՝ նա իբրև արտասահմանյան ցենդ ունեցող՝ վարձատրվում է այնքան քիչ, վոր ստիպված է լինում ամառային ամիսներին կատարել հասարակ մալյարի աշխատանքներ: Այսպես տարվի տարի նկարիչն աստիճանաբար հաշտվում է իր արվեստի համար սպանիչ վիճակի հետ. նա կարծես յերբեմն մոռանում էլ է իր արվեստագետ լինելը: Ռոստովում, որինակ, կազմակերպվող պատկերահանդեսին, նա մեծ դժվարությունը, միայն նկարիչների հորդորանքներին զիջելով է մասնակցում: Հասարակության ուշադրությունը և մամուլի գովասանքները կարծես ինքնամոռացությունից արթնացնելով հիշել են տալիս իր կոչումը:

Ընդհանուր առմամբ Աղաջանյանն իր գեղարվեստական աշխատանքներն տարել է մեծ մասամբ տրամադրված ժամերին, յերբ ներքին պահանջ է ցգացել, մասամբ դրա պատճառով նա տարեկան 3—4 նկարից ավելի չի տվել: Նկարիչ Աղաջանյանը միանգամայն տարբերվում է այն արվեստագետներից, վորոնք քամահաճ մուսայի հետ չեն կապում իրենց արվեստը, այլ աշխատում են անընդհատ, անկախ ներշնչումից: Աղաջանյանի վերաբերմունքը դեպի արվեստը և համոզմունքները զուգադիպում են Լ. Տոլստոյի յերազած ապագա-արվեստագետի իդեալ-տիպի հետ: Ըստ Տոլստոյի՝ «Ապագա արվեստագետը ապրելու յի իր հասարակություն ապրած սովորական կյանքով, իր ապրուստի միջոցները հայթայթելով վորեւ կողմնակի աշխատանքով, և արվեստով զբաղվելու յի այն ժամանակ միայն յերբ այդ գործունեությունն ներքին պահանջ զգաս: Այսպես է վարվել Աղաջանյանը: Արդարացի է սա արդյոք: Տոլստոյը կարդարացներ Աղաջանյանին այն դեպքում, յիթե արվեստը լիներ միմիայն բովանդակություն, յիթե այդ բովանդակությունը չպահանջեր կատարյալ համապատասխան նյութական և, առանց վորի բովանդակությունը մնում է նկարչի սրտում իբրև նրա անձնական ապրումները, հասարակության համար անհերքելի, անհասանելի և անըմբռնելի: Իսկ կատարյալ և յին հասնելու համար պահանջվում է անընդհատ լարված աշխատանք արվեստի բնագավառում: Աղաջանյանի արվեստի ֆորման բարձրության վրա յի գտնվում, բայց այդ պետք է վերագրել նրա անցած լավ դպրոցին, նրա բարտակարգ ընդունակություններին ու մեծ տաղանդին: Այստեղից պարզ է, վորքան վոր Ա-

դաջանյանի արվեստը բարձր արվեստին և պատկանում, բայց և այնպես նա դեռ նրա վնձ տաղանդի մի մասն է միայն ներկայացնում, մյուս պատկառելի մասը յեթե արդարացնենք արվեստագետին, միջավայրի «բարոյական ջերմություն» պակասության հետևանքով չի զարգացել: Այո, ուժեղ և Աղաջանյանի արվեստն ավելի քան մեր մաշտաբով, բայց ափսոս, այլ պայմաններում, գուցե նա միջազգային հռչակի հասներ:

1922 թվին տեղափոխվելով Խորհրդային Հայաստան, Աղաջանյանը կերպարանափոխվում է: Միտեմատիկ աշխատող, պարբերաբար ցուցահանդեսներ կազմակերպող արվեստագետների միջավայրը ընկնելով, նա վերանորոգվում և տակավին. և համեմատաբար կարճ ժամանակվա ընթացքում վերաթարմանում, աշխատունակ դառնում և վերակով որեց որ կատարելագործվում: Մի բացառիկ հատկություն, վոր ունի Աղաջանյանը, դա այն է, վոր յերկար տարիների ընթացքում կատարած անհամար պատվերները վոր մի վատ ազդեցություն չեն թողել նրա արվեստի վրա: Նրա արվեստը սկզբնական մաքրությունից չզրկվելով և աստիճանաբար զարգանալով հասել է մինչև մեր որերը և այսօր ծաղկում է իր ամբողջ առավելություններով: Անսպասելի և զարմանալի չե այդ հառաջդիմությունը յեթե նկատի առնենք նրա վերաբերմունքը դեպի գործը: Նա վոր միայն անկեղծությամբ և անմիջականորեն և մոտենում արվեստին, այլ և միշտ իրեն ըզզում է սովորողի դերում և սկսած աշխատանքը նկատում է լրջորեն, նույնիսկ ամիսներով խորանում է, ուսումնասիրում է հաղթահարում է ամեն տեսակ դժվարությունները, մինչև իր նպատակին հասնելը: Դրանք

խակական մեծ արվեստագետի վստահելի և բնորոշ հատկանիշներ են: Այդ եյական և արժեքավոր հատկությունների շնորհիվ ել նրա արվեստը չի ծերանում, այլ անվերջ թարմանում է և յերիտասարդանում: Նրա վրձիններու մաներան համարձակ է, լայն և տարրերային: Աղաջանյանի պորտրետները դիտելիս դուք հաճախ այն տպավորությունն եք ստանում, վոր նրանք կարծես ծեփված են գույներով, քանդակային են լույսի և ստվերների հաջող հարաբերությունների և հակադրությունների շնորհիվ:

Խնչպես է մոտենում Աղաջանյանը բնություն: Մեր միջավայրում յիս չեմ կարող Աղաջանյանից զատ հիշատակել մի ուրիշ նկարչի, վոր լինի այն աստիճանի գույագ, անմիջական և անկեղծ, բնության խակական գույները վերցնելիս: Նա յերբեք գեկորատիվ նկատառումներով չի չափազանցում և գեղեցկացնում գույները. նրա հիմնական նպատակն է խույս տալ վերացականությունից և վորքան կարելի յի մոտենալ, տիրել բնությանը և նրա բնական գունագեղությունը:

Արվեստներն ունեն պայմանականություններ: Աղաջանյանի ուղղությունը լինելով արվեստի շարունակությունը, դերծ չե վորդ պայմանականությունից: Նրա տաքուկ կոլորիտը մոտենում վարպետների կոլորիտին, բայց և այնպես նա մի սպաղաղ չե: Նրա գեղարվեստական ճկունությունը, անհատական առանձնահատկությունը թարմացնելով նրա վերջին գործերը, մոտեցնում են իմպրեսիոնիստական գունագեղության: Այնուամենայնիվ նա մատերիալը տալիս է անթերի, ձեռք պինդ, հեռու իմպրեսիոնիստական փխրուն տրակտովկայից, կոլորիտը չափազանց հա-

իռևս, նուրբ յերանգներով: Բայց գույների ծայրահեղ ճշգրտությունը ռեալիստականից յերեմի մոտեցնում է նատուրալիստական արտահայտության:

Առհասարակ Աղաջանյանի մոտեցումն առավելորեն յուղանկարչական (живописный) է: Մեղանում չկա մի ուրիշ նկարիչ, վոր յուղանկրի հատկությունները, հնարավորությունները և պահանջներն իրեն մասերիսի Աղաջանյանի նման այնպես բազմակողմանի և լրիվ կերպով ոգտագործի: Արդի հայ նրվեստում, վերջին ժամանակներս զգացվում է ղեկորատիվ, գրաֆիկական և այլ թեքումներ: Հաճախ մեղ մոտ յուղանկրն ոգտագործվում է տեմպերայի պահանջներին հատուկ մշակումով: Աղաջանյանը միանգամայն ազատ է այդ թյուրիմացություններից: Նա վերցնում է միայն յուղանկր, վորի բնությունը թափանցելով գործածում է իմաստությունը և մատերիսի գիտակցությունը: Այդ հանգամանքի շնորհիվ ել նա կարողանում է ցուցահանել յուղանկրում ծածկված բոլոր բնական արժեքները: Այդ խնդրում Աղաջանյանից շատ բան ունեն սովորելու հայ նկարիչները: Նայեցիք նրա յուղանկարների տեխնիկական միջոցներին, ինչպիսի բազմաղանություն, ներկերի կույտեր, թանձր և բարակ քովածներ, վրձինի ուժեղ զարկեր, թափանցիկ գույների վիրտաժներ և մութ խորություններ, վորոնցից գեղարվեստական եֆեկտով դուրս են ցցվում լուսավորված գունաքանդակ դիմաձևեր: Բացի ֆորմալ տվյալներից Աղաջանյանի դիմանկարներն ունեն և հոգեբանական արժեքներ, նրանք տիպիկ են և չափազանց նման: Բայց դա միայն ֆիզիկական նմանություն չէ, այլ տիպի հոգե-

կան անալիզը, նրա ճանաչողությունը, վորտեղ դեմքերը հանդիսանում են իրեն հոգու հայելիները:

Հետաքրքիր է և այն, վոր Աղաջանյանն արտահայտելով տիպի առանձնահատկությունները, չի սահմանափակվում միայն ֆիզիոնոմիայով, նա դիմում է վորոշ դեպքերում և լրացուցիչ միջոցի. հաճախ ոգտագործում է նկարվող անձի ձեռքերը, վորոնք արվեստի խնդրում պակաս արտահայտիչ չեն, վորքան վոր դեմքն է: Վ. Նիկոլսկին իր Սուրբիկովի մանոգրաֆիայում է միջի այլոց գրում է. «Ուրիշ մեծ նկարիչների նման Սուրբիկովը շատ լավ եր հասկանում, թե ինչպիսի հրակայական նշանակություն ունեն ձեռքերը յուրաքանչյուր նկարվող մարդի խտրակտերիստիկան արտահայտելու համար»: Նույնը կարելի յե ասել և Աղաջանյանի մասին, վորը բնագրարար զգալով այդ գաղտնիքը, զարմանալի արդյունքների յե հասնում: Նրա «զանքյուչ»-ի (զորանչի) և իր մոր ձեռքերը պերճախոսորեն ապացույց են, վոր Աղաջանյանն իր պորտրետներում բացի հոգեբան և դիմագետ լինելուց և մի տեսակ հումուր ձեռնահմա յե: Նա համարձակ կարող է ցուցադրել նման արտահայտիչ ձեռքերն առանձին իրեն ձեռնահմայական պորտրետներ:

Այժմ ընդգծենք մի հանգամանք ևս: Աղաջանյանը իրեն անխաղախ արվեստագետ, պատվերներն անգամ կատարելիս, ղեկավարվել է գեղարվեստական նրկատառությունների հիմքերով, համոզմամբ խուսափել է պատվերատուների բազմաճաշակ համարումներին յենթարկվելուց: Նա խուսափել է այն պատվերներից, վորտեղ հակադեղարվեստական թելադրանքների ձգտումներ են յեղել: Այդպիսի պատվիրողների հետ կոֆլիկտ

չունենալու համար, նա հաճախ նախադասել է իր արվեստի համար անֆուսս, մալյարի աշխատանքները— և խուսափել սալոնային նկարչի գայթակղեցուցիչ ճանապարհից: Ընդհանրապես առանց վերևի շահասիրական նպատակների, առանձին յերով նկարել է իր շրջապատի դեմոկրատիկ խավերի շարքային հասարակ տիպերը, վորոնք ի դեպս ավելի մոտ են յեղև նրա սրբտին: Այդ հանգամանքը վորոշ չափով պարզում է Աղաջանյանի ստեղծագործության հասարակական բնույթը: Ներկայիս Աղաջանյանի ստեղծագործությունն ապրում է ամենաբեղմնավոր և յեռուն մի ժամանակաշրջան: Մեր արվեստը դեռ նորանոր սպասելիքներ ունի նրա տաղանդավոր վրձինից:


Նկարիչ՝ ԳԱԲՐԻԵԼ ԳՅՈՒՐԶՅԱՆ

Աղաջանյանի մի քանի դուխ-գործոց նկարները— «Զորանշը», «Ռուս կինը» և «Մոր պատկերը» իրենց մակերևույթի փայլունության պատճառով՝ լուսանկարներն անհաջող դուրս յեկան, վորով անհնար յեղավ մեզ զետեղել սույն մենագրության մեջ:


Ա. ՅԵ.




ՆԿԱՐԻՉ ՍՏԵՓԱՆ ԱՂԱԶԱՆՅԱՆԻ ԳՈՐԾԵՐԸ



ՆԿԱՐԻՉ ԿՐԵՐ



ՔԱՄԱՐ ԵՓՐԱՅԱՆ



ԿՈՆԴԻ ԲԻԶԱ ՍԵԴՐԱԿԸ



ԳՈՒԼՊԱ ԳՈՐԾՈՂ ԿԻՆԸ



ՄԱՆԿԱԿԱՆ ԳԼԽԱՆԿԱՐ



ՀԱՍԻԼԸ



ՀՀ Ազգային գրադարան



NL0302204

2004

ԳԻՆԸ 30 ԿՈՄ.